

Art et Décoration ամսաթերթին մէջ (փետր. 1907). Պ. Փ. Լ. Վառույանէ նստիրած է այդ ցուցահանդէսին ընդարձակ ուսումնասիրութիւն մը որմէ կը քաղենք հետեւեալ նստումները .

« Գանի մը տարի առաջ , Չարդահան Արուեստներու Կեդրոնական Միութիւնը սարքած էր Մանմտական արուեստներու ցուցահանդէս մը , որ ամենամեծ յաջողութիւն ունեցած էր : Անորոշական տեսութիւն մը , ամփոփում մըն էր՝ եթէ կարելի է այսպէս ըսել՝ որ լաուազոյն օրինակները կը միացնէր այն իրերուն զոր մահմտական երկիրները գիացած են ստեղծել արուեստի բոլոր ճիւղերուն մէջ , պղինձ կամ խեցեգործութիւն , փղոսկր կամ գորգեր . . . Այսօրք Կեդրոնական Միութիւնը , մայր այլազան տարրերու զատ զատ եւ աւելի ամբարձմանօրէն ուսումնասիրելու ցանկութեամբ՝ իր ժամանակաւոր ցուցահանդէսներէն մին կը յատկացնէ մանմտական հիւսուածքներու ուսումնասիրութեան :

« Այս ցուցահանդէսը , քանի մը օրէ ի վեր բացուած , կազմակերպուած է այնպէս ինչպէս եղաւ ճակատական հիւսուածքներու ցուցահանդէսը . Կեդրոնական Միութիւնը որ ինքն իսկ ունի կերպասներու շատ զեղեցիկ շարք մը , խնդրած է քանի մը հաւաքողներէ որ հանին իրեն յանձնել հազուագիւտ եւ նետաքրքրական կտորներ : Այսպէս , կարելի է այս պահուս Փայլիեոն տը Մարսանի մէջ տեսնել շարք մը կերպասներու օրոնց մէջ մարզ կընայ հաննչալ մանմտական երկիրներու հիւսուածքի արուեստին ծնունդը , փայլն ու ճառագայլումը :

« Անա՛ կերպասներ որ կուդան տը Պէարն կոմունուոյն հաւաքածուէն , գորգ մը որ կը վերաբերի տիկին է . Սթերնի . պարսկական քութիւններ որ կը վերաբերին Պ. Քլոս Անէի . Պ. Պ. Փիէն-Լաթօտրիկ , տը Մատրազօ , Հոմպիերի , Լը Փրիեօր , Սթրաբ , Սաաուէ , փոխտուած են նոյնպէս կարեւոր նմուշներ Մանաւանդ , վերլպպէս , կարելի է տեսնել Կոն՝ գրեթէ ամբողջպպէս՝ Պ. Քէլէկեանի նշանաւոր հաւաքածուն , որ 250ի շափ կտոր կը պարունակէ , Պրուսայի մետաքաներ եւ Իւսկիւտարի թաւիչներ՝ մեծ մասամբ , բայց ուր կը գտնուին նաեւ հոյակապ պարսկական հիւսուածքներ եւ մետաքսէ եւ բուրգէ գորգեր , այնքան հազուա-

գիւտ օրքան հրապուրիչ : Այս յօդուածը պատկերացնող առջևմանները որ բոլորն այ այդ հաւաքածունը քաղուած են՝ զողովար կուտան անոր կարեւորութեան ու շահեկանութեան մասին »

(Յօդուածին կ'ընկերանան տամուկեց պատկերներ հրաշալի կերպով վերարտադրուած . յօդուածին շարունակութիւնը՝ մանմտական հիւսուածքներու արուեստին նուիրուած մանրամասն ուսումնասիրութիւն մըն է , զոր տեղի պակասը մեղի թոյլ չի տար թարգմանել այստեղ . կը շատանանք յիշատակելով նաեւ հետեւեալ նստումը .)

« Պարսիկները , եթէ ամենէն փափկաճաշակներն են , ամենէն սրամիտներն ալ են : Անոնց կը պարտինք այն ճապուկ ու փայլուն մետաքաներու այլազան տեսարաններով զարդարուած ուր մերթ սէրը , մերթ պատերազմը կը տեսնուի , մերթ որսորդութիւնը եւ մերթ կանացի խաղերը՝ Քէլէկեանի հաւաքածուին մէջ կը գտնուի այս շարքին ամենէն սիրուն նմուշներէն մին : Կարմրորակ մանուշակագոյն ընդանուր խորքի մը վրայ հորիզոնածեւ կը շարուին ծաղկաճ զեղճներն որոնց ճիւղերը կը տարածուին այնպէս որ մանուշակագոյն խորքը մերկ չձգեն : Այդ ճիւղերուն մէջ կ'երգնն զեղեցիկ արջաղաներ : Իւրաքանչիւր ծառի ոտքը , կ'անցնի , բարձեւ ու վե՛ն ձիւտ մը վրայ հեծած , երիտասարդ ուղմիկ մը՝ գարգմանակաւոր ապարօշով . ձիւտն գառակին վրայ , փոքրիկ կապիկ մը կայ , եւ ետեւը , շղթայի մը ծայրը՝ զոր կը բռնէ ուղմիկը՝ թաթար կալանաւոր մը որ , հակառակ զիրի բռնուած ըլլալուն , դու ահեղազէմ կ'երեւայ՝ իր խոշոր պիխեղուն պատճառով : Տեսարանը զմայելի է՝ մանկական ծանրութեամբ , եւ հիւսուածքին երփնականութիւնը իր ներդաշնակ անակնկալով կը հնայէ դիտողը :»

New York Heraldի քննադատը կը գրէ՝

« . . . Այս ցուցահանդէսին կողմը՝ հաւաքածուն է Պ. Քէլէկեանի , Նիւ-Եօրքի եւ Փարիզի ծանօթ « անթիլքեր »-ին , որ փոխ տուած է երկու հարերի շափ ամենակարեւոր կտորներ , որոնք կը կապմեն ոչ միայն ամբոփում մը այլ բովանդակ պատմութիւնը արեւելեան հիւսուածքործութեան արուեստին : Աչքին համար ճշմարիտ կախարդանք մըն են այդ թաւիչները ,

այդ կերպաները այժման այլազան երանգներով ու նկարներով, սկսեալ կարմիրով ու սպիտակով պնտուած թաւիչներէն որոնք վրայ ճամկաւորուած են ծանր բարբիտներ, նուեր, սաղարթանկարներ, արագեցնքներ : Մասնաւորապէս սիրեցի ներդաշնակութիւնները թաւիչ կտորի մը՝ գորշի զարնոզ մանուշակագոյն, արեւաքարի ցոլքերով սոկիխառն հաղարջի գոյնի մը փայլին միացած. ուրիշ մը կ'ընծայէ ամբողջ կապոյտ մը որ եղիպտոսի փերու զակ-կապոյտին կը մտանայ՝ սոկիխառն ձենալարդի գոյնին խտնուած :

« Հետաքրքրական մետաքսեղէններ՝ Աթոս կերան հին գործարաններէն ելած է, շատ շեշտուած թեւորակաւն զոյժ մը կը կրեն՝ կրկնութիւններով մետայեղներու, որոնց մէջ կը շքանակուին առաքեալներու եւ հրեշտակներու գէմքեր : Մէկ քանի կերպաներ բոլորովին պարօղական ոճ ունին Ասոնց ամենէն նշանաւորներէն մին կը ներկայացնէ ձիաւոր մը որ որ իր ձիուն քաւակը տղայ մը կը կրէ եւ որ կ'անցնի լայնատերեւ ծառի մը տակէն՝ բազմապատիկ կրկնուած : »

Յուցանանդէսին աւարտումէն յետոյ . Պ. Քէլէկեան իր հաւաքածուէն եօթը կտոր Չարգական Արուեստներու Մուսկոնին նուիրած ըլլալով, Չարգական արուեստներու Կերտնական Միւսթեան նախագահ, Սէնի երեսփոխան եւ էնսթիթիւի սնօքմ Պ. Ժ. Պերժէլէն ստացած է հետեւեալ նամակը .

« Պարոն ,

« Լիւեւեղեան Յուցանանդէսը որ նոր վերջացաւ , երեւան հանեց՝ իր ամբողջ փայտին մէջ՝ նոյակապ կտորները Ձեր հաւաքածուին որ իր սեռակին մէջ մէկ հատիկ է :

« Ազնիւ փափկանկատութեամբ մը՝ շուգեցիք մեր սրահներին ետ աճել Ձեր գոյքերը՝ առանց Մուսկոնին Ձեր անցքէն յիշատակ մը ձգելու՝ անոր նուիրելով՝ իր արեւելեան հաւաքածուներուն համար՝ եօթը կտոր հիւսուածք , 3 պանկ եւ երկու յղկեալ յախճապակի կտոր՝ ամենամեծ շահեկանութիւն ունեցող :

« Գուգամ ուրեմն , Պարոն , յանուն մեր ընկերութեան՝ ինչպէս եւ իմ անձնական անուանով՝ Ձեզ յայտնել մեր խորին երախտագիտու-

թիւնը Ձեր այդ վեհանձն արարքին համար :
« Հաճեցէք ընդունիլ , Պարոն , իմ բոլոր շնորհակալութեանցս հետ , յարգանաքս հաւատարմքը :

Ժ. Պերժէլ

Պ. Քէլէկեան որոշած է հրատարակել, զբրի ձեւով, իր կերպաներու հաւաքածուին վերորտարդութեանց շարքը . գործը , որ պիտի լոյս տեսնէ քիչ օրէն , պիտի սպագորուի Պ. էմիլ Լէվիի տան ձեռքով, եւ պիտի ըլլայ գեղարուեստական սքանչելի հրատարակութիւն մը : Հատորին յատնարարը գրած է Պ. Կիֆրէ , նանրածանօթ Տանապետ մը , Կոպլէնի կապերտագործարանին վարիչը . այդ յուսուածքանին թարգմանութիւնը պիտի նրատարակենք մեր յաջորդ թիւին մէջ :

Այս հատորին պատրաստութեան միջոցին Տիգրան խան Քէլէկեան ազգասիրական ազնիւ ձգտումն ունեցաւ դիմումներ ընելու՝ գտնելու համար փաստեր պարսիկ արուեստի այդ նրապակերտներուն մէջ հայ տաղանդին բաժինը հաստատող . դիմաց Վենետիկ Միաբանութեան , զիմաց անհասանելու . կը փափաքէր Պ. Կիֆրէ իր յառաջաբանին մէջ կարենար ապացոյցներով մատնանել ընկ շայուն մասնակցութիւնը պարսիկ արուեստին . բայց որովհետեւ Ենթարկութիւններէ եւ քանի մը անբաւական տեղեկութիւններէ ուրիշ բան կարելի չէ գտնել առայժմ, Պ. Քէլէկեան չկրցաւ իր բաղձանքին գուհայում սալ : Երանի՛ թէ Լիւեւեղի բանարով զբաղող մեր բոլոր մասնագէտ Հայերը ունաչբութիւն դարձնին այս հարցին վրայ եւ աշխատէին զայն լրջօրէն լուսարանելու . Հայերը անուշտ կարեւոր բաժին մը ունեցած են մասնատական երկիրներու արուեստին ինչպէս բանաստեղծութեան մէջ . այսօր իսկ՝ իրենց գեր լայնամպիւս կարեւոր է . բայց պիտո՞ք դունել որոշ փաստեր՝ անցեալին համար , անուշտեր , թուականներ , իրողութիւններ , տղբամաններ : Ու պէտք է նաեւ , ու մանաւանդ, երեւան հանել ինչ որ եղած է հայ տաղանդին արտարդութիւնը՝ նոյն իսկ Հայաստանի արուեստներուն մէջ . մեր արքեւսիքներն ալ ունէին անուշտ իրենց գորգերը , կերպաները , նկարները , ասեղնապորձութիւնները , սնօթները , զարդական բոլոր առարկաները՝ զուտ հայ ոճով . ստույգ

երեւան պիտի ելլեն և մասամբ պատմագիրներու մէջ տեղեկութեանց յայտարարումով, բայց մասնաւոր պեղումներու նետեանքով. փրֆ. Մար արդէն իսկ ք լոյս հանեց Անիի խորհրէն Բագրատունեաց շրջանի Հայոց առանին կեանքի շատ մը առարկաներ. մաղթենք որ այդպիսի պեղումներ, խուզարկութիւններ, ուսումնասիրութիւններ քաջալերուին, շարունակուին, ընդարձակուին, եւ որ մը Հայ ցեղն ալ կարենայ տիեզերական ցուցահանդէսներուն մէջ լիակատարօրէն ի ցոյց դնել իր ուրոյն արուեստը ամէն ձեւով :

Առ այժմ, մենք ուրախութեամբ կ'արձանագրենք յաղթական յաջողութիւնը Հայու մը եւրոպայի մէջ՝ իբր նրբաճաշակ ըմբռնող, հաւատարմութեամբ արեւելեան արուեստին :



ՀՍԹ ԷՔԵՐ

Տաղ Եկեղեցւոյ

ԵՒ

Ի ՏԱՆԱՐՆ ՍՈՒՐԲ

(Վերագրւած Գ. Նաբեկեացւոյն)



օրք ի վերուստ իշեալ առ Սողոմոն արքայն,
 Եինէին զտաճարն, տաշէին ըզփայտն,
 Գերէին ըզքարն առ ձեռնադրեալ փայտին .
 Գորգեցաւ երկիք, հուշակեցան լերինք,
 Քատառեցաւ արձանքն, ի ծայնէ յունադորդ ֆայթմանցն :

Երկոտասան նիւթից, երեքտասան կողմանց,
 digitised by

Չորեքտասան մասանցն; կապուտակ նիւթիցն,
 Ջնոյն քարոզէին, ըզվարսն հատանէին,
 Ի ներքնական սեմոցն՝ զարծաթապատ բեւեռքն
 Ի լրծակէ լրծակ :

Մըտանէր Գիրիմն արքայն ի տունըն տէրու-
 նական,
 Տեսանէր Գիրիմն արքայն ըզգարդ գամենայն
 գունիցն.
 Ըզշողն եւ ըզշուշան, ըզյորդանն եւ ըզացա-
 գոյն սպիտակն,
 Անդնդահոս վըտակ, հաւ Թիթըւնտ արկեալ,
 Ջայն մարգարտով կազմէր, շողանման կապէր
 Ի կողակէ կողակ :

Քանի՞ Թիւ կողեկացն, քանի՞ Թիւ խորանացն,
 Քանի՞ Թիւ կամարացն, քանի՞ Թիւ կանթողացն,
 Քանի՞ Թիւ վարագուրացն եւ քանի՞ Թիւ զան-
 գակացն .
 Հազար Թիւ կողակացն, հազար Թիւ խորա-
 նացն,
 Հազար Թիւ կամարացն, հազար Թիւ կան-
 թողացն,
 Հազար Թիւ վարագուրացն եւ բիւր մի զան-
 գակացն :

Տաճարքն այն ո՛ւմ նըման է, աճառքն այն
 ո՛ւմ նըման է .
 Մարդակքն այն ո՛ւմ նըման է, գերանքն այն
 ո՛ւմ նըման է .
 Ժոյակքն այն ո՛ւմ նըման է, պիւնքն այն
 ո՛ւմ նըման է .
 Խարիսխքն այն ո՛ւմ նըման է, եւ տաճարն
 այլ ո՛ւմ վույլ է :

Աճառքն մարտիրոսացն, մարդակքն մարգա-
 ընիցն,
 Գերանքն քերովքէիցն, խոյակքն առաքելոցն,
 Սիւնքն սերովքէիցն, խարիսխն սքրոյ Կուսին:
 Տաճարն վայլ է Գրկչին :

Քարշէին ըզլարն, հնչէին զանգակքն,
 Գորդայր տաճարն, հոխայր ճախարակքն,
 Տնծայր Սողոմոն արքայն,
 Եւ երգս ի բարձունս երգէին նուագելով,
 Եւ գոչէին ասելով Ալելուիա :

